

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հունիսի 6—10 օրերին Մոսկվայի և համայն Ռուսիոց Պատրիարք Տ. Պիմենի նախաձեռնությամբ և հրավերով Մոսկվայում գումարվեց կրոնական գործիչների համաշխարհային համաժողով՝ նվիրված կայուն խաղաղության, զինաթափման և ժողովուրդների միջև արդար հարաբերությունների հաստատմանը:

Կոնֆերանսին մասնակցեցին քրիստոնյա և այլ կրոնների շուրջ 650 ներկայացուցիչներ, աշխարհի 107 տարբեր երկրներից:

Սույն կոնֆերանսին Հայաստանյայց առաքելական եկեղեցին և Մայր Աթոռը ներկայացնում էր անձամբ Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Առաջինը՝ ընկերակցությամբ տ. Կոմիտաս, տ. Շահե, տ. Արսեն սրբազանների, տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանի և տ. Տիրան վրդ. Կյուրեղյանի:

Հունիսի 6-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Մոսկվայի «Յենոր Էստրադա» դահլիճում բացվեց համաշխարհային սույն կոնֆերանսը՝ բոլոր ներկաների աղոթքով և կոնֆերանսի նախապատրաստական կոմիտեի նախագահ տ. Յուվենալի միտրոպոլիտի բացման ճառով:

Կոնֆերանսի լիագումար նիստում ողջույնի խոսքով առաջինը հանդես եկավ Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը: Այնուհետև ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահ Ալեքսեյ Կոսիգինի ողջույնի ուղերձը ընթերցեց ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Վ. Ա. Կուրոյեդովը:

Ընթերցվեցին նաև Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղար Կուրտ Վալդհայմի և մի շարք պետությունների ղեկավարների ողջույնի ուղերձները:

Մուֆթի Զիյաուդդին Բաբախանովը, հանուն Սովետական Միությունում ապրող մահմեդականների, հանդես եկավ ընդարձակ զեկուցումով, որը նվիրված էր խաղաղության գաղափարի շուրջ տարբեր կրոնների մերձեցմանն ու միջկրոնական համագործակցությանը՝ ի նպաստ աշխարհի խաղաղության պաշտպանությանը:

Լիագումար նիստում հանդես եկավ նաև Ամենայն Հայոց Հայրապետը ֆրանսերեն մի ճառով, որը նվիրված էր կայուն խաղաղության, զինաթափման և ժողովուրդների միջև արդար հարաբերությունների հաստատմանը:

Հունիսի 7-ին, երեքշաբթի օրը, կոնֆերանսն իր աշխատանքները շարունակեց աշխատանքային երեք խմբերում:

Հունիսի 9-ին, հինգշաբթի օրը, ժամը 15-ին, Կրեմլում ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Ս. Բ. Նիազբեկովը և նախագահության քարտուղար Մ. Պ. Գեորգաձեն ընդունեցին կոնֆերանսի պատվո և գործադիր նախագահության անդամներին: Ընդունելության ժամանակ ողջույնի խոսքով հանդես եկավ նաև Հայոց Հայրապետը:

Նույն օրը, ժամը 20-ին, ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհուրդը, ի պատիվ կոնֆերանսի պատգամավորների, կազմակերպեց պաշտոնական ընդունելություն՝ գլխավորությամբ խորհրդի նախագահ Վ. Ա. Կուրոյեդովի:

Հունիսի 10-ին, ուրբաթ օրը, գումարվեց կոնֆերանսի եզրափակիչ նիստը, որը ողջույնի և շնորհակալության հեռագիր ուղղեց ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահ Ալեքսեյ Կոսիգինին՝ կոնֆերանսի աշխատանքներին ցույց տրված ուշադրության և բարյացակամության համար:

Հանուն կայուն խաղաղության, զինաթափման և ժողովուրդների միջև արդար հարաբերությունների հաստատման, կոնֆերանսում ընդունված որոշումների և եզրակացությունների լույսի տակ, սույն նիստում ընդունվեցին նաև երկու փաստաթղթեր՝

ա) Կոչ աշխարհի բոլոր երկրների կառավարություններին.

բ) Կոչ ամբողջ աշխարհի կրոնական գործիչներին և հավատացյալներին:

Կոնֆերանսն իր աշխատանքների վերջում հրապարակեց համապատասխան հաղորդագրություն:

Մոսկվայի սույն կոնֆերանսը կարևոր մի ներդրում հանդիսացավ խաղաղության ի նպաստ մղված պայքարի ճանապարհի վրա՝ հօգուտ բոլոր ազգերի և ժողովուրդների խաղաղ համագործակցության:

Հունիսի 11-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը վերադարձավ Մայր Աթոռ՝ խաղաղության աստվածահաճո գործին ի նպաստ Իր գործոն մասնակցությունը բերած լինելու ներքին գոհունակությամբ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
13 հունիսի 1977 թ.